

ԱՅՆՍՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

|| ատիկան :

ՀՐՈՄ քաղաքը՝ ՚ի սկզբան եօթը  
բըի վրայ շնած ըլալով, ան բլուրնե-  
րուն մէկը || ատիկան կ'ըսուեր, ու ին-  
չուան հիման աս անունը պահեր է . ա-  
սոր վրայ շնուած է սրբոյն Պիետրոսի  
տաճարը, և քահանայապետական պա-  
լատը՝ որ կ'ըսուի նաև || ատիկան ա-  
պարանք : Պապերը սովորաբար ձմեռը  
միայն հոն կը ընակին, իսկ ամառը  
Կուիրինեան ըսուած պալատը :

|| ատիկանի պալատը ահագին մե-  
ծութեամբ շէնք մըն է, կամ թէ ըսենք՝  
շատ մը մեծամեծ շէնքեր են մէկտեղ  
բերած . քսանուերկու գաւիթ կը համ-  
րեն մէջը, քսան գլխաւոր սանդուխ,  
երկու փառաւոր մատուռ ու տասուեր-  
կու հազար սենեակ . բայց այս սենե-  
կաց համրանքին մէջ չափազանցութիւն  
կայ կ'ըսեն : Խնդղիացի Ճանապարհոր-  
դին մէկը աս խօսքերով կը ստորագրէ  
|| ատիկանի պալատին մեծութիւնն ու  
փառաւորութիւնը . “ ՚ի սպալատը, կ'ը-  
սէ, անանկ զարմանալի մեծագործու-  
թիւն, վսեմութիւն ու գեղեցկութիւն  
ունի որ անկեց աւելին կարծես թէ  
մարդս ուզէ ալնէ չիրնար երեւակայել.  
որ դին դառնաս՝ ընդարձակութիւն,  
հոյակապութիւն, տեսակ տեսակ ազ-  
նիւ մարմարիններու անբաւ հարստու-  
թիւն, և ամենէն անուանի Ճարտարա-  
պետներու և պատկերահաններու ձե-  
ռագործներ . ազքդ որ դին դարձնես՝  
նոր տեսարան մը կը տեսնես, ամէն  
կումը՝ ամէն մասունքը գեղեցիկ հա-  
մեմատութեամբ շնած, լայն ու ար-  
ձակ դահլիճներ, բարձր երկըթէ վան-  
դակներ, գաւիթներուն մէջտեղուանքը  
զարդարուն շատրուաններ, Ճերմակ ու  
փայլուն մարմարիննէ սիւներ, վանդա-  
կասիւներ, կամարակապեր, մարդուս  
ազքը կ'առնեն ու կը զմայլեցընեն : Պա-  
լատին մեծամեծ պատուհաններէն ալ  
չոռմայ խիստ երեւելի ու հոյակապ տե-

սարամները ազքիդ առջեւը կուգան,  
բուրգերը, կոթողները, արձամնները,  
հոչակաւոր բլուրները և հեռաւոր գաշ-  
տերը . Ո՞եկ ազգ մը չկայ աշխարհիս  
երեսն որ || ատիկանի պէս վսեմու մե-  
ծագործ ազգային շէնք մը ունենայ .  
ուստի պէտք է որ ատիկայ միշտ մնայ  
ու պահուի իբրև սրբազն բան : Պար-  
դիկ հիմա այնչափ կրթուած ու լուսա-  
ւորուած են որ վախ չկայ թէ ասկէց  
ետքը աշխարհակալի մը բարբարոս ձեռ-  
քովը || ատիկանի գանձերը պղծուին ,  
՚ի սպալատին սրահներուն ու գահ-  
լիճներուն մէջ հաւաքուած են խիստ  
շատ անզին հնութիւներ, Պիոսի-Լիզե-  
մայ թանգարաննը, և Վիարամնթեան  
թանգարաննը : Հոն են Պիոսսեան ու  
Սեբուեան մատուռները, վատիկա-  
նեան մատենազարաննը, պատկերաց  
թանգարաննը, ատտիկեան թանգարա-  
նը, եզիպտական թանգարաննը, արձա-  
նագրաց, անօթոց, զրոշմածաց, աշտա-  
նակաց հաւաքմունքները . որ մէկն ը-  
սեմ . բոլոր վատիկանեան պալատին  
ստորագրութիւր ամբողջ գրքերու նիւթէ :

Հոս դրուած պատկերը՝ նոյն վատի-  
կանեան պալատին մէջ Պաֆոյէլքան  
Դակլիճն ըսուած իրեք մեծամեծ սրահ-  
ներուն մէկն է . ասոնց մէջի բարձր  
քանդակներուն ու պատկերներուն մեծ  
մասը Պաֆոյէլ Պերպինեցի հոչակա-  
ւոր պատկերահաննին ձեռքովը կամ իր  
առաջնորդութեամբը եղած են, անոր  
համար ալ իր անունովը կը կոչուին :



Առքարելուն դահլիճ: